# «TYME» առանց հաշվի բացման դրամական փոխանցումների համակարգ

| N | Դաշտի անվանումը | Նկարագրություն |
|---|---|---|
| 1 | **Համակարգի անվանումը** | TYME |
| 2 | **Պաշտոնական կայքը** | https://tyme.ua/ru |
| 3 | **Համակարգի օպերատորի անվանումը, գրանցման հասցեն,երկիրը** | ООО «ФК ОМП-2013», 01042, г. Киев, ул. Тверской тупик, 5А, Украина |
| 4 | **Համակարգի գործունեության թույլտվության/լիցենզիայի/ գրանցման առկայությունը** | Ուկրաինայի Ազգային բանկ, թույլտվության համար N21, տրված՝ 13.10.2014 |
| 5 | **Համակարգում պրոցեսինգ իրականացնող կազմակերպության անվանումը, գրանցման հասցեն, երկիրը** | ООО «Финансовое Сервис Бюро», 01103, г. Киев, ул. Киквидзе, 18а, Украина |
| 6 | **Համակարգում քլիրինգ իրականացնող կազմակերպության անվանումը, գրանցման հասցեն, երկիրը** | ООО «ФК ОМП-2013», 01042, г. Киев, ул. Тверской тупик, 5А, Украина |
| 7 | **Համակարգում վերջնահաշվարկ իրականացնող կազմակերպության անվանումը, գրանցման, հասցեն, երկիրը** | Կենտրոնացված վերջնահաշվարկի գործակալ առկա չէ |
| 8 | **Համակարգի հետ ինտեգրված/հարակից համակարգերի անվանումները** | Առկա չեն |
| 9 | **Համակարգի  շրջանակներում ՀՀ ԿԲ կողմից գնահատված ծառայությունների տեսակը/տեսակները** | *Առանց հաշվի բացման դրամական միջոցների փոխանցման ծառայությունը՝ փոխանցումների կատարումը ֆիզիկական անձ հանդիսացող շահառուին միջոցների՝ կանխիկ տրամադրման եղանակով* |
| 10 | **Համակարգում մասնակիցների միջև կիրառվող վերջնահաշվարկի կատարման սկզբունքները** | Համակարգում վերջնահաշվարկն իրականցվում է արտասահմանյան բանկերում բացված կողմերի թղթակցային հաշիվների միջոցով, շաբաթական պարբերականությամբ (10,000 ԱՄՆ դոլար/եվրո գերազանցելու դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը), զուտ սկզբունքով և ԱՄՆ դոլար կամ եվրո արժույթով (կախված փոխանցման արժույթից): |

| | | |
|---|---|---|
| 11 | **Համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը** | Ներկայացված անդամակցության պայմանագրի նախագիծը եւ այլ փաստաթղթերը չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:<br><br>Ներկայացված փաստաթղթերում ապահովված են.<br>• ԿԲ խորհրդի 2014թ.-ի սեպտեմբերի 23-ի թիվ 250-Ն որոշմամբ հաստատված Կանոնակարգ 19-ի պահանջները;<br>• ՀՀ ԿԲ խորհրդի 2006թ.-ի հուլիսի 4-ի թիվ 342 Ն որոշմամբ հաստատված Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետևանքով Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և (կամ) իրացվելիությունը և (կամ) վճարունակությունը վտանգելու մասին ուղեցույցի պահանջները: |
| 12 | **Համակարգում կիրառվող տեխնիկածրագրային, հեռահաղորդակցման միջավայրը** | Համակարգում կիրառվող հեռահաղորդակցման ու կապի միջոցները, կիրառվող տեխնիկածրագրային միջավայրը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության դրույթները, ռիսկերի կառավարման մեխանիզմները, ինչպես նաև Համակարգի գործունեության անընդհատության ապահովման սկզբունքները գնահատվել են բավարար: |